Հավելված N 35

Հաստատված է
Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահի
2023 թվականի հունիսի 15-ի
թիվ 267-Ա հրամանով

Փոփոխված է
Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահի
2024 թվականի օգոստոսի 6-ի
թիվ 406-Ա հրամանով

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԹՌԻՉՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ
(Թռիչքների անվտանգության կառավարում)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) թռիչքային անվտանգության ապահովման և որակի կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիրը՝ **22-4-ՔԱԿ-23.7-2**):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ որակի կառավարման գլխավոր մասնագետը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան:

2. Պաշտոնի բնութագիրը
(Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները)

2.1. Աշխատանքի բնույթը՝

2.1.1. Հիմնական գործառույթները՝

1. իրականացնում է թռիչքների անվտանգության կառավարման խնդիրների և գործառույթների վերաբերյալ կարգերի ու նորմատիվային փաստաթղթերի մշակման աշխատանքները.
2. իրականացնում է թռիչքների անվտանգության կառավարման համակարգի ներդրման, վերահսկողության առումով Բաժնի պետի հրամանների և հանձնարարականների կատարումը.

3. մասնակցում է Թռիչքային անվտանգության պետական ծրագրի (այսուհետ՝ ԹԱՊԾ) իրականացմանը.
4. իրականացնում է ԹԱՊԾ-ի ներդրման և կիրարկման պլանի վերլուծության ու ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները.
5. ցուցաբերում է աջակցություն մասնագիտական ստորաբաժանումներին թռիչքների անվտանգությանն առնչվող վտանգների հայտնաբերման, ռիսկերի գնահատման, թռիչքների անվտանգությանն առնչվող տվյալների հավաքագրման ու վերլուծության գործընթացներում.
6. իրականացնում է ավիացիոն իրադարձությունների զեկուցման, վերլուծության և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման ու հաշվառման գործընթացները.
7. մշակում և տարեկան կտրվածքով վերանայում է Թռիչքների անվտանգության ազգային պլանը (National Aviation Safety Plan)՝ հիմնվելով Թռիչքների անվտանգության համաշխարհային պլանի (Global Aviation Safety Plan) և Թռիչքների անվտանգության եվրոպական պլանի (European Plan for Aviation Safety) վրա.
8. մասնակցում է Եվրոպական Թռիչքների անվտանգության տարածաշրջանային պլանի (Regional Aviation Safety Plan) ներդրման աշխատանքներին.
9. վեր է հանում թռիչքների անվտանգությանը վերաբերող ռիսկերը, հիմնական բնութագրերի ցուցիչները (Key Performance Indicators), թռիչքների անվտանգության ապահովման արդյունավետության ընդհանուր ցուցիչները, թռիչքների անվտանգության բնութագրերի ցուցիչները (Safety Performance Indicators) և վերահսկում սահմանվածից շեղման միտումները.
10. ներկայացնում է թռիչքների անվտանգության ընդունելի մակարդակի (Acceptable Level of Safety) սահմանումը.
11. սահմանված կարգով իրականացնում է թռիչքների անվտանգությանն առնչվող տվյալների պահպանումը.
12. ուսումնասիրում է ՀՀ քաղաքացիական ավիացիայի բնագավառում ծառայություններ մատուցող կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություններ) թռիչքների անվտանգության կառավարման համակարգերի ձեռնարկները, դրանցում կատարված փոփոխությունները և դրանց հաստատման վերաբերյալ առաջարկություն ներկայացնում Բաժնի պետին.
13. Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Կազմակերպությունների թռիչքների անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության գնահատման վերահսկողության աշխատանքներին.
14. վերահսկողության աշխատանքների արդյունքում հայտնաբերված թերությունների մասին զեկուցում է Բաժնի պետին, անհրաժեշտության դեպքում՝ դրանց վերացման վերաբերյալ ներկայացնում է համապատասխան առաջարկություններ.
15. մշակում և տարեկան կտրվածքով վերանայում է ՀՀ ԹԱՊԾ, ՀՀ Թռիչքային անվտանգության պետական քաղաքականության հայտարարությունը, Կոմիտեի թռիչքների անվտանգության կառավարման ձեռնարկը և դրանց հաստատման վերաբերյալ առաջարկություն ներկայացնում Բաժնի պետին.
16. իրականացնում է օտարերկրյա ավիացիոն ուսումնական կազմակերպությունների ճանաչման և երկարաձգման գործընթացը.
17. թռիչքների անվտանգության կառավարման կանոնակարգման նպատակով մշակում է իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ.
18. իրականացնում է մեթոդաբանական աշխատանք Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների հետ՝ թռիչքների անվտանգության կառավարման համակարգի գործընթացների և Կոմիտեում դրանց կիրառության մասով:

2.1.2. Լրացուցիչ գործառույթները՝

19. իրականացնում է որակի կառավարման համակարգի խնդիրների և գործառույթների վերաբերյալ կարգերի ու կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի մշակումը.
20. մշակում և Բաժնի պետին է ներկայացնում անհամապատասխանությունների շտկման ընթացակարգերը, մշտադիտարկում է անհամապատասխանությունների հաշվետվությունները և ձեռնարկում ուղղիչ/կանխարգելիչ գործողություններ որակի աուդիտի արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների ուղղման կամ կանխարգելման ուղղությամբ.
21. իրականացնում է որակի կառավարման համակարգի ներդրման ու կիրառման նպատակով անցկացվող հանդիպումների և ժողովների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները, ղեկավարությանը ներկայացվող վերլուծությունների համար կատարվող տվյալների հավաքագրումն ու համակարգումը.
22. իրականացնում է որակի կառավարման համակարգի հիմնում ու ներդրում՝ միջազգային ստանդարտներին համաձայն.
23. իրականացնում է որակի կառավարման համակարգին առնչվող փաստաթղթերի (այդ թվում՝ որակի ձեռնարկի, որակի քաղաքականության) նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակումը, վերանայումն ու լրամշակումը.
24. վերահսկում է ստորաբաժանումների կողմից սահմանված կարգով իրականացված գործընթացների համապատասխանությունը գործող պահանջներին.
25. իրականացնում է ներքին աշխատանքային գործընթացների շարունակական հսկողություն և կատարելագործում.
26. իրականացնում է մեթոդական աշխատանք Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների հետ՝ որակի կառավարման համակարգի գործընթացների և Կոմիտեում դրանց կիրառության մասով.
27. իրականացնում է որակի կառավարման համակարգի գործընթացների արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ պարբերաբար զեկույցներ ներկայացում Բաժնի պետին.
28. իրականացնում է որակի աուդիտ՝ նպատակաուղղված որակի կառավարման համակարգի գործընթացների համապատասխան ուղղիչ և կանխարգելիչ գործողությունների շարունակական կատարելագործման ապահովմանը.
29. ուսումնասիրում է ՀՀ-ում քաղաքացիական ավիացիայի բնագավառում ծառայություններ մատուցող կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություններ) որակի ապահովման ձեռնարկները, դրանցում կատարված փոփոխությունները և դրանց հաստատման վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում Բաժնի պետին.
30. իրականացնում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության թռիչքների անվտանգության վերահսկողության ստուգումների համընդհանուր ծրագրի (Universal Safety Oversight Audit Programme) աշխատանքների համակարգումը.
31. որակի ապահովման շրջանակներում մասնակցում է 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված «ՀՀ և ԵՄ անդամ-պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրով (Common Aviation Area Agreement - CAAA) տրված կանոնակարգերի հիման վրա օրենսդրության վերանայման և համապատասխանեցման աշխատանքներին.

32. Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Կազմակերպությունների որակի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման վերահսկողության աշխատանքներին.
33. իրականացնում է շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապը (բողոքների ու դժգոհությունների վերլուծություն, առաջարկների քննարկում, հարցաթերթիկների կազմում, պարբերական հանդիպումների կազմակերպում)՝ պարզելու շահագրգիռ կողմերի բավարարվածության աստիճանը:

Կոմպետենցիա պահանջող գործառույթները կիրառելի են համապատասխան կոմպետենցիան հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

2.2. Իրավունքները՝

- Թռիչքների անվտանգության կառավարման աշխատանքների կազմակերպման և իրականացման ժամանակ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից ու աշխատողներից պահանջել և ստանալ Կոմիտեի առջև դրված գործառույթների և խնդիրների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, լրացուցիչ տվյալներ, հիմնավորումներ և աջակցություն.
- Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներից կատարել հարցումներ թռիչքների անվտանգության կառավարման համակարգի հետ առնչություն ունեցող գործընթացների և փաստաթղթերի վերաբերյալ.
- Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնել առաջարկություններ՝ թռիչքների անվտանգության կառավարման և վերահսկողության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.
- մասնակցել թռիչքների անվտանգության կառավարման նպատակով գումարվող հանդիպումներին ու ժողովներին՝ նախապատրաստելով զեկույցներ և առաջարկներ.
- ապահովել ՀՀ օրենսդրությամբ և Կոմիտեում սահմանված պահանջներին համաձայն իր մասնագիտական կարողությունների շարունակական համապատասխանությունը թռիչքների անվտանգության հսկողության և վերահսկողության ոլորտում անհրաժեշտ դասընթացներին մասնակցելու միջոցով:

2.3. Պարտականությունները՝

- կատարել թռիչքների անվտանգության կառավարման համակարգի ներդրման, վերահսկողության առումով Բաժնի պետի հրամանները և հանձնարարականները.
- հետևել ԹԱՊԾ-ի իրականացանը.
- մասնակցել ԹԱՊԾ-ի ներդրման և կիրարկման պլանի վերլուծությանը և ճանապարհային քարտեզի մշակմանը.
- աջակցել մասնագիտական ստորաբաժանումներին թռիչքների անվտանգությանն առնչվող վտանգների հայտնաբերման, ռիսկերի գնահատման, թռիչքների անվտանգությանն առնչվող տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացներում.
- մասնակցել ավիացիոն իրադարձությունների զեկուցման, վերլուծության և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման գործընթացներին.
- մասնակցել թռիչքների անվտանգության ազգային պլանի մշակմանը և տարեկան կտրվածքով վերանայմանը (National Aviation Safety Plan)՝ հիմնվելով Թռիչքների անվտանգության

համաշխարհային պլանի (Global Aviation Safety Plan) և Թռիչքային անվտանգության եվրոպական պլանի (European Plan for Aviation Safety) վրա.

- մասնակցել Եվրոպական Թռիչքների անվտանգության տարածաշրջանային պլանի (Regional Aviation Safety Plan) ներդրման աշխատանքներին.
- վեր հանել թռիչքների անվտանգությանը վերաբերող ռիսկերը, հիմնական բնութագրերի ցուցիչները (Key Performance Indicators), թռիչքների անվտանգության ապահովման արդյունավետության ընդհանուր ցուցիչները, թռիչքների անվտանգության բնութագրերի ցուցիչները (Safety Performance Indicators) և վերահսկել սահմանվածից շեղման միտումները.
- ներկայացնել թռիչքների անվտանգության ընդունելի մակարդակի (Acceptable Level of Safety) սահմանումը.
- պահպանել թռիչքների անվտանգությանն առնչվող տվյալներն էլեկտրոնային և թղթային տարբերակով.
- մշակել իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

1) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) տիրապետում է ՀՀ քաղաքացիական ավիացիայի ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերին.
3) ունի համակարգչով ու ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4) ազատ տիրապետում է անգլերեն լեզվին:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Առնվազն երկու տարվա հանրային ծառայության կամ մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքացիական ավիացիայի բնագավառում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ: